




**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«28» 12 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-24/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.05.2015թ. թիվ 1/73-1/831254-15, 03.08.2015թ. թիվ 1/73-1/20540-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22017-15 գրություններով ներկայացված «Արմենֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00039741) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.05.2015թ. թիվ 1/73-1/831254-15, 03.08.2015թ. թիվ 1/73-1/20540-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22017-15 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

(այսուհետ նաև՝ Յուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Յուցակում ներառելու համար:

2. «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 22.05.2015թ. թիվ 01/04.1/1125-15, 19.08.2015թ. թիվ 01/04.1/[1150]-15 և 20.08.2015թ. թիվ 01/04.1/2141-15 գրություններով դիմել է «Արմենֆարմ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 22.05.2015թ. թիվ 01/04.1/1125-15 գրության՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն 03.06.2015թ. թիվ 02/06-1 գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերությունը 04.05.2015թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, իսկ 02.06.2015թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

3. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 29.05.2015թ. թիվ 01/04.1/1162-15 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1)՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Յուցակում ներառելու հարցի վերաբերյալ և Կենտրոնին տրամադրել «ԲՊ-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 25.06.2015թ. թիվ Ե-6/48 գրությամբ Կենտրոնին է տրամադրել Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները և հայտնել, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 11.05.2015թ. հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՊ-

ՇՀԱՊԶԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.05.2015թ. Պատվիրատու 1-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Արմենֆարմ» ՍՊԸ-ն 04.05.2015թ. **(հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 6205632 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ: Արդյունքում, Ընկերության հայտը մերժվել է:

4. ՀՀ ԱՆ «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու 2) ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 29.07.2015թ. թիվ ԿԲ-156 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատու 2-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՃԲԼԱԳԿ-ՇՀԱՊԶԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2), որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակից՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի վերաբերյալ Պատվիրատու 2-ը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարել է հարցում:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (02.07.2015թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Կենտրոնը 19.08.2015թ. թիվ 01/04.1/[1149]-15 գրությամբ դիմել է «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ և Կենտրոնին տրամադրել «ՃԲԼԱԳԿ-ՇՀԱՊԶԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները,

որին ի պատասխան՝ Պատվիրատու 2-ը 10.09.2015թ. թիվ ԿԲ-172 գրությամբ Կենտրոնին տրամադրել է պահանջվող փաստաթղթերի պատճենները:

5. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 20.08.2015թ. թիվ 01/04.1/2194-15 գրությամբ դիմել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու 3)՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ և Կենտրոնին տրամադրել «ՇՀԱՊՁԲ-15/4-5(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3) վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատու 3-ը 02.09.2015թ. թիվ 09/2185 գրությամբ Կենտրոնին տրամադրել է պահանջվող փաստաթղթերի պատճենները:

6. ՍՑ-ԳԲԽ-24/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. ՀՀ ֆինանսների նախարարության 19.05.2015թ. թիվ 1/73-1/831254-15 գրությամբ ներկայացված «Արմենֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲՊ-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 1-ի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (04.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 1-ը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 11.05.2015թ. կատարած հարցմամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ընկերության կողմից **2015թ. մայիսի 4-ի դրությամբ** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.05.2015թ. Պատվիրատու 1-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Արմենֆարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (04.05.2015թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 6205632 ՀՀ դրամի չափով:

- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի 14.05.2015թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 2.1 կետով որոշվել է «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

- «Արմենֆարմ» ՍՊԸ-ն 03.06.2015թ. թիվ 02/06-1 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը 04.05.2015թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

2. ՀՀ ֆինանսների նախարարության 03.08.2015թ. թիվ 1/73-1/20540-15 գրությամբ ներկայացված «Արմենֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՃԲԼԱԳԿ-ՇՀԱՊԶԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (02.07.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարերի գծով:

- Պատվիրատու 2-ը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 20.07.2015թ. կատարած հարցմամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ընկերության կողմից **2015թ. հուլիսի 2-ի դրությամբ** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Արմենֆարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (02.07.2015թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3125979 ՀՀ դրամի չափով:

- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 27.07.2015թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 2.2 կետով որոշել է, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետով սահմանված պահանջները, «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

3. ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2015թ. թիվ 1/73-1/22017-15 գրությամբ ներկայացված «Արմենֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊԶԲ-15/4-5(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի 3-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 3-ի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (04.08.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 3-ը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 06.08.2015թ. կատարած հարցմամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ընկերության կողմից 2015թ. օգոստոսի 4-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.08.2015թ. Պատվիրատու 3-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (04.08.2015թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 11487013 ՀՀ դրամի չափով:

- Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովը 14.08.2015թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 2-րդ կետով որոշել է, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության վերը նշված եզրակացությունը, «Արմենֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար:

7. ՍՑ-ԳԲԽ-24/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.05.2015թ. թիվ 1/73-1/831254-15, 03.08.2015թ. թիվ 1/73-1/20540-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22017-15 գրությունները, «Արմենֆարմ» ՍՊԸ-ի 03.06.2015թ. թիվ 02/06-1 գրությունը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին» ՓԲԸ-ի 28.07.2015թ. թիվ 40-959 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները,

«Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ի 29.07.2015թ. թիվ ԿԲ-156 գրությունը, 10.09.2015թ. թիվ ԿԲ-172 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի 02.09.2015թ. թիվ 09/2185 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ եթե Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Այսպիսով, ի պատասխան ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին» ՓԲԸ-ի 11.05.2015թ. հարցմանը՝ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից 12.05.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 04.05.2015թ.**, ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 6205632 ՀՀ դրամի չափով:

Ի պատասխան «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ի 20.07.2015թ. հարցմանը՝ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 02.07.2015թ.**, ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 3125979 ՀՀ դրամի չափով:

Ի պատասխան Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի 06.08.2015թ. հարցմանը՝ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից 07.08.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 04.08.2015թ.**, ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 11487013 ՀՀ դրամի չափով:

Նման պայմաններում Ընկերությունը, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չունի մասնակցելու վերը նշված գնումների ընթացակարգերին:

Մինչդեռ, Ընկերությունն Ընթացակարգ 1-ին, Ընթացակարգ 2-ին և Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով համապատասխանաբար՝ 04.05.2015թ.,

02.07.2015թ. և 04.08.2015թ. հայտեր ներկայացնելով՝ փաստորեն հավաստել է, որ իրավունք ունի մասնակցելու գնումների վերը նշված ընթացակարգերին, ինչը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու պայմաններում Ընկերության կողմից հանդիսանում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Պետք է նշել, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 03.06.2015թ. թիվ 02/06-1 գրությամբ, ըստ էության, ընդունել է, որ Ընկերությունը ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՊ-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 04.05.2015թ.,** ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 19.05.2015թ. թիվ 1/73-1/831254-15, 03.08.2015թ. թիվ 1/73-1/20540-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22017-15 գրություններով «Արմենֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00039741) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված վեց ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Լ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-24/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան